

# ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ

ԵԿԵՂԵՑԻՈՅ Ա.Ռ.Ա.ԶԻՆ ԴԱՐՈՒԻ



ԳԼՈՒԽ Ա.

ՓԼԱԽԵԱՆ ԱՄՓԻԹԱՏՐՈՒՆ



ԵՂԵՑԻԿ ես, ո' Հռոմ, զեղեցիկ  
մեծովթեամբ և յիշատակօց ։ Երբ  
յայց կ'ենիմ աւերակացդ, երեւա-  
կայսութիւնս կը պահայ անցեալ գարուց  
մէջ և կը տեսնեմ զքեզ, զօրա-  
ար ոյխոյ մը, որ ամենուրեց կը տարածես  
կայսերութեանդ գաւաղանը և կը տիրապե-  
տես աշխարհիս ուսնմանաց ։ Կը տեսնեմ դիւ-  
ցազունքդ որ կը թափեն իրիւնը՝ի պաշտ-  
պանութիւն հայրենեաց ։ Կը լսեմ պերճա-  
խօս ճարտասաններդ՝ որ ծերակուտին օրէնք-  
ները կը հրատարակեն թեմերու վրայէն, և  
կը դժեմ ախրագին. « Գեղեցիկ ես, ո'  
Հռոմ, բայց հեթանոս Հռոմն ես ։ Եթեոյ  
տէրութեանդ ունայնիւթեան, քաղաքացեացդ  
քայնովթեան և զինուրացդ արիւթեան վերայ  
զարմանալէն զազրած, ուրիշ ժամանակ մը  
կը նկատեմ և կը տեսնեմ զքեզ, որ թէ-  
պէտ իշխանութեամբ աւելի փոքր, առայն  
ճշմարտութեամբ մեծ ես. ահա քրիստոնեայ  
Հռոմն ես : Այն ժամանակ կը մսածեմ Քրիս-  
տոսի հաւաքին համար եղող մարտիրուսները,  
կ'իջնեմ խաւարչին գետաղամբաներու  
մէջ, յուղեալ սրտիւ կը մսնեմ կրկիսաց  
մէջ՝ ուր հոգլէական մողովուրդն արեան  
տէրով կը զուարճանար. ահա հոն պիտի  
առաջնորդեմ ընթերցուներս, եթէ համին  
ընկերել ինձ :

Փլախեան ամփիթարունն, որ վեսպատիա-

նսի ժամանակ սկսած և Ցիտոսի ժամանակ  
տարտած է, իրարա վերայ գետեղուած չորս  
կարգ կամարները զոռոզութեամբ վեր կը  
բարձրացնէր. հոն չորս տեսակ ճարտարապե-  
տութիւն կը նշմարուէին. այսինքն՝ ետրու-  
րական, դորիական յոնիական և կորնթական :  
Երուսաղեմի գերիներն աշխատած էին անոր  
կառուցման, և այն թշուառաց արտասունքն,  
որը իրենց ծննդալայրը կ'ողբային, ողղղած  
էր այն վիթխարի շինուածոյն քարերը :

Այլ և այլ անցրեռով իրարմէ անշատուած  
երեց կարգ աստիճանք կը շրջապատէին ըն-  
դարձակ հրապարակը : Առաջինն՝ որ է գետնին  
ամենամատն, ամկին սեփականեալ էր : Եր-  
կամեայ բարձր վանդակ մը կը պահպանէր  
զօռովուրդը վայրի վազանաց յարձակումնե-  
րէն, որոնք ասսիճաններուն ներքիւ շինուած  
փոքր գռնակներէ ներա կը մտնէին : Կայսեր  
օթեակն, աւելի բարձր էր քան գլւեստեան  
կուսանաց, և շինուած էր երկրորդ . յարկին  
վերայ, մարմարեայ սիւներով զարդարուած :  
Աստիճանաց առաջին շարքին վերայ կը նստէին  
սինկրիտուազ և պաշտօնական անձինք, միւս  
մասերն կը պահուէին ասպետաց և քուրմե-  
րուն, կը երրորդ աստիճանը կը վերաբերէր  
պատրիկական ցեղէ շեղող կանանց, և անոնց  
որ՝ ուշ հատնելով՝ շէին կրցած տեղ զանել  
առաջնոյն վերայ :

Քրիստոսի թուականին 96 տարւոյն, օ.՝

գոստոսի գեղեցիկ միջօրէէ մը վերջ, բովանդակ Հոռվայեցիք դէպ 'ի Փլաւեան ամփիթարոնը կը դիմէին :

Առաւոտանց կանուխ, իւրաքանչիւր փողոցի անկիւնները փակցուած ծանուազգերը կը ցուցնէին այն առսերամարտից անուանը՝ որք պիտի կոռւէին, որոց մէջ կը տեսնուէր մեծ և կարմէր տառերով զրուած ցանցամարտ Պարիսու անունն :

Այս հասարակաց հանդէսն պիտի կատարուէր Դոմետիանոս կայսեր կողմանէ, Դակիացոց վերայ տարած յաղթութեան եօթներորդ տառերգարձն տօնմու համար :

Մինչդեռ ժողովուրդն դէպ 'ի ամփիթամրոնը կը վալմարյ, վարակաւոր ցուափի մը վերայ յենած մարդ մը Հաշտութեան տաճարին կողքէն եղնելով, ճամփայ կը բանայը ժողովրդեան միջէն դէպ 'ի հանդիսին ասհմանեալ վայրը դիմելու համար : Ելր պատին քոյ հասաւ, կեցաւ պահ մի շոնչ առնու համար :

Սպիտակ մօրուօց ծերունի մ'էր, որոց պատառուուն ներքնազգեստն զրեթէ բալորովին կը ծածկուէր անձրւապահ վերարկուին (penuria) ներքի, և հիւանդաց կամ ծերոց թաղեայ զիսարկ մը կը ծածկէր անոր ճաղատ զիսուն սակաւ մազերը : Խոկ խորչումալից գէմքն կը ցուցընէր թշուաւ և զըրկանօք լի կեանք ունեցողի մը պատսկերը. սակայն այսու հանդերձ խիստ և վեհ կերպարանքն հակապատկեր մը կը կազմէր հագած պատառուուն զգեստոց հետ :

Նա իւր չորս կորմէն անցողաց բլորովին անտարբեր՝ անշարժ կը կենար, երբ ժողովը զեան շարժում մ'իւր ուշադրութիւնը զրամց. վերուց աշքերը և տեսաւ երկու զահաւորակը որ քոյէ քոյլ կը յառաջէին :

Առաջինն, զոր կը կրէին ութ նումիդացի ստրուկներ և որոյ առջևէն կ'երթային զինեալ սպասաւորներ, զարդարուած էր ծաղկիներով և ժապաւինօք. երկրորդն որ, ճշշդն ըսելով, ոչ թէ զամաւորակ մի՛ այլ սկլա կոչուած փոխազրելի պատզարակներէ մին էր, բնաւ զարդ շոնէր և զայն շորս վերիներ միայն կը տանէին :

— Դուետիա է, կեսարու ամստինն, ըստ թիթեազէն զօրաց վաշտէն զինուոր մը :

— Պարիսի բաղզը պիտի բանի այսօր, եթէ կարենայ զուարձացնել զիոմետիա Աւագոստուհին, պատասխանեց մէկն ժողովրդեան միջէն :

Երերունին մարկ կ'ընէր ասոնց, առանց բառ մ'արտաբերելու: Իւր վեհանձն և ազգու նայուածքով կը հետևէր զեսպակաց, և սրախովթեան փայլ մ'անցաւ երեսին փայէն, երբ տեսաւ որ գերիներն զանոնք կամարին քոյլ վար զրին պահ մի յոգնութիւն առնլու համար :

Ամէնուն աշքերն յանօրուատ սեւեռուած էին սելլային վերայ՝ ներսի անձնաւորավթիւնը աեւներու համար, զի կտաւէ վարագոյր մի զայն կ'արգելյար :

Բայց ահա սպիտակ ձեռք մը մէկզի ըրաւ վարագոյրը, և մանկամարդ կոնջ մի քաղցր և ազգու զէմքն տեսնուեցաւ. նա յենած էր ծիրանի բարձերու վերայ, և բոլորովին ծածկուած սուուս կոչուած երկայն զգեստով մը :

Նա զուրս հանեց զվախը և հետարքրութեամբ ամբոխը զիսեց: Անշամբերի ժպիտ մը փայլեցաւ իւր շրթանց վերայ՝ երբ տեսաւ զծերունին. ոչ ձեռքը տարաւ ճակարնին, իւր թէ մաները կարգի կը զնէր, յետոյ կործքին՝ կարծես իւր հազաւատին ծալքերը կ'ուզէր յարաբերէլ, վերջը աարաւ զայն ձախուսին, և հուսկ ուրեմն աջ տախն վերայ կեցուց իւր ձեռքը :

Ոչ մէկուն աշքին զարկած էին այս ձեւերա, և սակայն ուշիմ քննիչ մը՝ ծերուն այն նայելով՝ պիտի աեւնէր որ նա եւս մի և նոյն ձեւերը կ'ընէր :

Քիչ մը վերջ, վարագոյրը գոցուեցաւ և պատզարակներն ճամբայ եւան :

— Ո՞վ է այն աիկինն, հարցուց զինուորն :

— Փլաւիա Դոմիտիլլա է, կայսեր սանն, կատարեալ հրեշտակ մը պարկեշտառթեան, պատասխանեց ծերունին հեռանալով:

— Հրեշտակ մը, շատ կը փափազիմ զիսնալ թէ հրեշտակներն կենդանեաց ո՞ր դասակարգին կը պատկանին :

— Հրեշտակներն քրիստոնէից աղանդէն պաշտուած օգիներ են, ըստ մէկն, պարծենալով իւր զիսութեան. վերայ :

— Ուրեմն այն ծեր շունն քրիստոնեայ էր, հա. ո՞ւր էր թէ բռնէի զինքը, զուց զինուրն ասպանալեօք իւր շուրջը զիսելով։

— Հայր Արամազդ, թոյլ տո՛ւր որ երթայ : Հանդէսն պիտի չի զուարճացնէ զնա, որովհն էտեւ իւր ընկերներէն մին վայրի գոզանաց առջեւ պիտի ձգուի, ըստ ուսմիկն զինուրին բազկին յենլով։

Մինչդեռ ասոնք իրենց խօսակցութիւնը յասաց կը տանէին, ծերունին Մենու սուշարիա աղբեր առջեւ հասնելով պահ մի զադար առաւ։

Միջակ մեծավթեամբ տձեւ ժայռ մը միայն կը մնայ այն պանչելի աղբիւրէն, որ ամփեթատրոնին դիմացը կը զարդարէր և որոյ զագաթէն մինչև վայր կը հոսէր ջրոյ ծաւալ մը, որ բիբեղեայ բաժակի մը ձեւն առնովլ կ'երթար կը կարսուէր փարը զետեղուած մարմարեայ աւազանի մը մէջ։ Այս աղբիւր, որ հասարակաց զարդ մ'էր, սուսերամարտաները զովացնելու այլ կը ծառայէր, երբ անսնք քրտնաթօր և փոխելից դուրս կու վային մերձակայ մրցարան։

Մերունին՝ մարմարեայ աւազանին յենած՝ շեշտափի կը նայէր ամփիթատրոնին պատերուն, մեղմ և ընդհատեալ ձայնի մրմշելով։

— Գոնէ կարենայի ժողովել այն կուսին նշանարը՝ որ քու հասարակի համար պիտի մեռնի, ո՞վ Ալսուած իմ. . . խեղճ ֆլորոնիա, մարտիրոսութեան պասկն քեզ կը սպասէ . . . Դոմիտիլլա զիս տեսաւ, զիտէ նա՞թէ ինչ պատճառաւ ես հոս եկած եմ։ Մեռնի՛ զեռ քան տարեկան, այնչափ նեղուելէ յետոյ, ո՞հ, շատ դժուարին է։ Բայց ինչո՞ւ կը ցափմ իւր վերայ։ Երկնից դռներն պիտի բացուին իւր առջեւ, և արդէն հրեշտակներն ովաննա կ'երգեն։

Այս մենախօսութիւնս աւարտելով՝ յերմեռնդութեամբ աչքերը գէպ յերկինս զարձուց, և համբան առաջ տարաւ, թէի մը վերջ հասաւ յամփիթատրոնն և պահ մի մոտածելէ յետոյ՝ զէպ ի՛ զիխաւոր դուրք զիմեց. իւր առջեւն կ'երթային երկու պատզարակներ՝ որք յերկորդ քարիկոնն առաջնորդող սանդղին աստիճանին վերայ զուեցան, և որոց միջէն դուրս ելան վեստայի երկու քրմանք։

Առաջինն, կարճահասակ և տարեց, կանո-

նաւոր զիմազգծեր ունէր, բայց իւր չոր և նիւհար զէմբն առաջին անդամ տեսնողին հակակութիւն կ'ազգէր։ Իւր մազերը ծածկուո սպիտակ ցողերն աւելի դուրս կը ցատկեցնէին իւր զեղին դոյնը. հազած էր սպիտակ պարեգոտ մը, ուկեայ գոտով մէջքը սեղմած, բրդէ մեծ վերարկու մը, նակուին վերայ կցուած գարձեալ սոկիէ մի շրջանակաւ, բոլորովին կը պատէր զինքը՝ մինչև գետին հասնելով։

Երկորդն իւր զեղեցկութեան և երիտասարդութեան բոլոր պայծառութեան մէջ էր։ Գծագրութիւնն կանոնաւոր, մեծ և սեւ աչեր, ձեւաւոր քիթ մը, թարմ և դիմիթիշ ժափիտով մը գեղեցկացած զուրթներ։ Բայց ամէն բանէ աւելի կը փայլէր այդ գողարիկ արարածին մէջ, անմեղութեան և պարզութեան արտայայտութիւն մը. անբծութիւն և հպարատութիւն, վեհանձնութիւն և շնորհը կը զարգարէին անոր զէմբը։

Նա գէպ ի՛ սանգուղն դիմեց առանց ուշ զնելու իւր ընկերոջ։

— Կուռնելիիա, մի՛ աճապարեր, քեզ չեմ կրնար հասնի, գուեց միւսն սուր ձայնով։

Կուռնելիա յետ դարձուց իւր զուխրը և մստեցաւ, և յակամայս ետ ետ զնացած միջոցին զարնուեցաւ ծերունոյն որ շափէն աւելի յառաջացած էր։ Պահապաններէն մին, վազեց զարնելու այն մարդան, որ յանզըգնութիւն ունեցած էր վեստայի քրմանւոյ մը մօտենալու, բայց օրիորդն արզիեց անոր հարուածը՝ բարկութեամբ ըսելով։

— Յարգէ սպիտակ մազերը, կ'ուզէ ծիրանիով ծածկուած ըլլան, կ'ուզէ պատառուտուն զգեստներով։

Եւեոյ ծերունոյն մօտենալով,

— Ներէ՛ ինձ, ծերունի դու, ըստ, անյշ ձայնիւ։

— Դուսար Փաւառովայի, դու զիս չի՛ նախասեցիր, և եթէ ոսիցդ տակ զիս կուխուես ալ, դարձեալ զքեզ պիտի օրինեմ, պատասխանեց նա հայրական զորովանօց քրրմանւոյն նայելով։

— Ո՞վ ես դու, որ մայրս ճանցեր ես, հարցուց կուռնելիա զարմացմամբ։

— Ի՞նչ բանի պիտի զայ կրինել այն անունն՝ որ քեզի բոլորովին անծանօթ է, շատ

տարիներ անցած են այն օրէն 'ի վեր՝ յուրում ճանցած եմ քու ծնողդ. բայց խընդիմ, անոր յիշատակին համար ըլլայ, բարի գործ մը կատարէ այսօր ազատէ այն թշուա ազիկը որ գաղանաց առջև պիտի ձըգուի :

Անշուկ արտասուաց կաթիլ մը սահեցաւ ծերունոյն այտից վրայէն, կուռնելիս զարամցած՝ վթալիր կը վիտէր զծերը :

— Ի՞նչ ըսել կ'ուզես, չեմ հասկնար, ըսաւ հուսկ ապաւ :

— Քրիստոնեայ կոյս մը մահուան զատապարուած է, և անոր ցաւալից հոգեվարքն պիտի դուարմացընէ անգութ ժողովուրդ մը... կրնաս ազատել զնա :

— Կը սփայի՛ս, ծերունի, վեստեանց մահոււնէ կրնան ազատել միայն այն զատապարուեաները, որոց կը հանդիպին ճամբուն վերայ : Ամփիթատրոնին մէջ միայն կայսրն կրնայ ներել, բայց նա կ'առէ զքընսունեայ :

Տիւուր հառաշանք մ'եղաւ ծերունոյն պատասխանն. իւր վերարկուին ծայրովն սրբբեց արտասունել :

— Կուռնելիս, շուտ ըրէ՛, ըսաւ միւս քրմուհին որ սանդղին վրայ կը սպասէր :

Կուռնելիս յի լսելու զարկու, վայրկեան մի զիտեց ծերունին և աննկարազրելի բարութեամբ ըսաւ :

— Դու ճանցե՛ր ես մայրս, զոր աստուածունոյ պէս կը յարգեմ: ինձ աղքաս և թշուառ կը թուխո, այնաէս ըրէ որ ուրիշ անգամ մ'այլ քեզի հանդիպիմ... և...

Կարմիրելով կանք առաւ, այն պատասխառուն զեկսուներ հազած անձն այնպիսի վերմ կերպ մ'ունէր, որուն նա յի համարձակեցաւ ողորմութիւն տայ :

— Շնորհակալ եմ, կուռնելիս, ըսաւ ծերունին անոր միտքը հասկնալով.

Եւ աելցուց :

— Այո՛, պիտի տեսնուինք վերսախին, և եթէ ամենակարողն կատարէ մօրդ ազաշանքն, աշքերդ ճշմարտութեան լուսոյն պիտի բացուին :

— Կուռնելիս, գուեց գարձեալ քրմուհին :

— Ահա կու զամ, Փլաւիս :

Մանկամարդ քրմուհին հեռացաւ մուածեւ լով :

— Ո՞վ է այս մարդն որ ճանցեր է մայրս, և որ պյուպիսի անհասկնալի լեզուաւ կը խօսի :

— Ազօթէ՛, ո՛վ ֆաւատուլա, աղօթէ՛ որ կարենամ կատարել մահուանգ մահնէին քով տուած խոստմունքու երբ ինձ կը յանձնարար ըէկի աղջիկդ, կ'ըսէր նոյն միջոցին ծերունին՝ աշքերը քրմուհեաց ճերմակ զգեստէն յի զատելով :

Երբ անոնց անհետացան, դուրս ելաւ գամթէն և ասաիմաններուն վերայ ատանող բազմաթիւ դռնակներէն միոյն սկսաւ մօտենալ :

Երկու հոսկմայեցի ասպետներ մին միւսին կրթնած իւր առջեւէն կ'երթային :

— Պուրիխաս, աեսամբ հօրս սանը, կ'ըսէր երիցագոյնն, որ մերթ ուրախ և մերթ մաղձան գէմք մ'ունէր : Նա վեղեցկութեան մասին կը վերազանցէ քան զԱստղիկ: Ո՞վ էր թէ առանց գոյի տեսնէի օր մը զնա, վեղեցիկ մաղերուն վերայ սրանշանալու համար :

— Լո՛ւ, Սեբաստոս, պյուսէս թեթեւութեամբ մի՛ խօսիր վեստեան կուսի մը վերայ, պատասխանեց Պուրիխաս :

— Ո՛հ, ի՞նչ գործի կու գան շաստուածներն, կարծեա թէ կոսց կը հաւատամմ:

— Կը հայոյես : Քրիստոնեայ ես արդեօք :

— Զէ՛, ըսաւ Սեբաստոս, խնդալով : Քրիստոնեայց կ'անարգին ինչ որ ես կը պատուեմ, կը զատապարտեն՝ ինչ որ կը սիրեմ: Ո՛չ քրիստոնեայ եմ և ոչ զԱրամազդ պաշտոտ, աստուածներս հանդիպներն են, անոնցմէ զատ բանի մը պիտի չի հաւատամ երբէք :

— Պիտի հաւատաս, երբ հրեշտակ մը խօսի հոգացյա հետ, ըսաւ զօրեղ ձայն մը Սեբաստոսի ետեւէն :

Սա անմիջապէս ետեւ զարձաւ, բայց յի կրցաւ տեսնել վերարկու հազած ծերունին, որ այն բառերը արտաբերելէ յետոյ աներեւոյթ եղած էր :

Երկու բարեկամք բաւական փնտեցին իւրենց հետ խօսող խորդգաւոր անձը, բայց յի կրցան գտնել . և թէ պէտ սկեպտականն Սեբաստոս ուղեց խնդալ այս տարօրինակ ազ-

զարարութեան վերայ, սակացն իւր զիմաց վե- | լուռ ու մունջ Պուրլիխով հետ բաղուկ բազ-  
րայ կը տեսնուէր հոգոյն կրած յուզումն : | կի տուած երկուքն ալ ամփիթատրոն մոտան :

(Շարայարելի)

## ԿԵՍԱՐ ԿԱՆՏՈՒ ԻՏԱԼԱՑԻՈՑ

ԽԵՆ ՊԱՏՄԱԳՐԻ ԽՆՆՍՆԱՄԵԱԿ



ԿԵՍԱՐ ԿԱՆՏՈՒ Ի ՍՐԱՎԱՐԺ ԷՐ  
Իւր պարզութեանը մէջ այն  
տեսարանն, որ տեղի ունեցաւ  
գեկտ. 8-9ին Միլան քաղաքի  
Մորդինի թաղին տնակին մէջ.  
ուր կէս գարէ ի վեր կ'ապրի, այս-  
ինքն՝ կը խորհի և կ'աշխատի կե-  
սար կանոտու, իտալական աղջին և  
ներկայիս մեծագոյն փառք հանդիսա-  
ցոյ հինաւուրց ծերունին նոյն ամսոյն  
հնգին՝ աւարտեց նա իւր ինննաս-  
մեակը, բայց իր վերայ պանչացողք՝  
հին սովորութեամբ մը՝ ամսոյն ութե-  
րորդ օրը, այսինքն քաղին պաշտպան  
սրբոյն Ամբրոսիոսի յիշատակին տո-  
նախիմբեցին : Այդ օրը բազմութիւն  
քաղաքացւոց տիկնայց, տղայոց, եկած  
խոնած էին այն սրահներուն մէջ, ուր  
մեծամեծ և նշանաւոր անձինք՝ իտա-  
լացիք և օտարք, եկեր էին իրեն յայցե-  
լութիւն և ի մեծարանն, թիէրի և  
լիսցի նմաներէն սկսեալ՝ մինչ ի Բալ-  
զակ և կայսրն Բրազիլիոյ, Բալբոյ (Bal-  
bo), Ռոզմինի, և Մտոպանիէ՛ մինչև  
ի ծիրանաւորն լավիթըրի. անհամար  
արուեստագէտք և ուսումնականք :

Հոչակաւոր ծերունին բազմած ա-  
նոնց մէջ, համեստութեամբ կ'ընդու-  
նէր առ ինքն ուղղուած մաղմանաց  
և մեծարանաց հետ՝ փունջ փունջ ծաղ-  
կանց. խոհական ազնուածուք գլուխն  
ծածկուած երկայն՝ բայց ոչ դեռ

ևս սպիտակացեալ հերօք, ամենուն  
սքանչանաց առիթ էր. Առողջ կեր-  
պարանքն՝ որ մխիթարութիւն է զին-  
քըն յարգողաց, կը խոստանայ տա-  
կաւին երկայն տարիներ. իսկ զուար-  
թամիտ և քաղաքավար խօսակցու-  
թիւնն՝ հաճոյական է և գիտնական  
ինչպէս ամէն ատեն :

Լաւ կ'ըսէ. գեր. իսիդորոս կարինի  
(վատիկանեան գրչագրաց բազմա-  
հմուտ մատենապետն), թէ «կենաց կոր  
գիծը. կը կատարէ, աշխատելով միշտ  
ճշշմարտին և բարւոյն համար. կարծես  
թէ առանց իր անդրադառնալուն. և  
լատին քերթողին ըսածին պէս, տա-  
րիները գիզուած են ուսուցը վերայ  
առանց շշոնջ մը հանելու. tacitus se-  
nescimus annis (¹).

Ցղայք՝ մաղթանաց պարերգ մը եր-  
գեցին. յետոյ բազմութիւն օրիորդաց  
իբրև իրարու մրցակիցք՝ անուանի  
անձին գրտուածներէն արձակ և ոտա-  
նաւոր հատուածներ արտասանեցին :  
Եր որովհետև ինքն նկատել տուաւ թէ  
ամենքն ալ սրտաշարժ կտոր մ'ընտ-  
րեր էին, պատասխանեցին իրեն՝ թէ  
զարմանալու բան չի կայ, զի իւր գը-  
րուածներէն առնուած էին անոնք. և  
որոց մէջ՝ սիրտն է նախկին տեղն գը-  
րաւողն :